ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գործող կարգավորումների – Հարկային վարչարարության մշակման և բարելավման վերաբերյալ

1. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

ՀԿ-ների կողմից մտահոգություն է հայտնվել է, որ «ձեռնարկատիրական գործունեության համապատասխանությունը կանոնադրական նպատակներին» ձևակերպումը լիազոր մարմնի կողմից կարող է գործնականում լայն և տարածական մեկնաբանման տեղիք տալ և որակվել որպես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.27-րդ հոդվածով նախատեսված արարք, այն է՝ հասարակական կազմակերպության կողմից կանոնադրության նպատակներին անհամապատասխան գործունեության իրականացումը, ինչը կարող է հանգեցնել ընդհուպ մինչև կազմակերպության հարկադիր լուծարման:

Հետևաբար, անհրաժեշտ ենք համարում հստակ սահմանել համապատասխանության թեկուզև նվազագույն չափորոշիչները՝ նորմի կամայական մեկնաբանությունից խուսափելու նպատակով: Որպես ելակետային հիմք պետք է ընդունել այն, որ իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը չպետք է հակասի կանոնադրությամբ ամրագրված կազմակերպութան առաքելությանն ու նպատակներին: Ուստի, որպես լուծում առաջարկում ենք որդեգրել հետևյալ մոտեցումը՝ ձեռնարկատիրական գործունեությունը համապատասխանում է կանոնադրական նպատակներին, եթե չի հակասում դրանց:

Առաջարկություն. Հասարակական կազմակերպությունների մասին օրենքում լրացման տեսքով ամրագրել, որ գործունեությունը համարվում է կանոնադրությանը համապատասխան, եթե այն չի հակասում ՀԿ կանոնադրությանը:

2. 1. Օրենքի 26-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է հինգ միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա օրենքով սահմանված կարգով պետական մարմիններ ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 15-ը հանրային միջոցներից ֆինանսավորման մասով ենթակա են պարտադիր աուդիտի՝ Կազմակերպության ժողովի ընտրած անկախ աուդիտորի կողմից: Անհրաժեշտ է գնահատել, թե որքանո՞վ է հիմնավորված Օրենքի հիշյալ նորմով նախատեսված պարտավորության կատարման պահանջն այն դեպքում, երբ հանրային միջոցներից ֆինանսավորման ժամանակ տրամադրվող միջոցների չափի մեջ առանձին չի ներառվում ֆինանսավորման մասով ենթակա պարտադիր աուդիտի անցկացման համար անհրաժեշտ ֆինանսավորման չափը, որը հետագայում լրացուցիչ բեռ է դառնում հասարակական կազմակերպությունների համար: Իսկ շատ դեպքերում անկախ աուդիտ անցկացնող կազմակերպություններին վճարվող դրամական միջոցների չափը բավականին մեծ գումար է կազմում՝ ի համեմատ Կազմակերպությանը տրամադրված հանրային դրամական միջոցների չափին: Լրացուցիչ խնդիրներ են առաջանում նաև, երբ անկախ աուդիտ իրականացնող կազմակերպությունները Կազմակերպություններից պահաջում են իրենց ողջ գործունեությանը առնչվող փաստաթղթերը, որպեսզի կարողանան ամբողջական պատկեր ունենալ: Նշված խնդիրները առաջանում են հատկապես այն դեպքերում, երբ Կազմակերպությունների կողմից որոշակի ծրագրերի իրականացման համար ներգրավված հանրային դրամական միջոցներն ուղղակիորեն բավարար չեն լինում և ֆինանսական այլ ռեսուրսների ներգրավման անհրաժեշտություն է առաջանում, հետևաբար աուդիտի է ենթարկվում ամբողջ ծրագիրը:

Գործընկեր հասարակական կազմակերպությունների հետ համատեղ այս խնդիրը բարձրացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեում քննարկման ժամանակ: Ի պատասխան այդ հարցման՝ ՀՀ ՊԵԿ ներկայացուցչի կողմից 2019 Մարտի 28-ին տրվել է ոչ հստակ պատասխան՝ հետևյալ ձևակերպմամբ. «...Ֆինանսների նախարարությունը պատրաստել է աուդիտորական գործունեության մասին օրենքի փոփոխության փաթեթ-նախագիծ, որի ընդունման հանգամանքով պայմանավորված փոփոխություններ են նախատեսվում նաև հասարակական կազմակերպությունների մասին օրենքի՝ աուդիտին վերաբերվող դրույթներում»:

Հարկ է նշել, որ միջազգային դոնոր կազմակերպություններն՝ իրենց կողմից տրամադրված ֆինանսական միջոցների չափի մեջ որոշակի չափով դրամական միջոցներ են նախատեսում նաև իրենց միջոցներով Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերի աուդիտի անցկացման համար և նման մոտեցումը պետք է ամրագրվի նաև հանրային դրամական միջոցների ներգրավման դեպքում:

2.2. Վերոնշյալ կարգավորումները խնդիրներ են առաջացնում նաև այն դեպքում, երբ ձեռնարկատիրական գործունեությամբ վարելու իրավունք ունեցող Հասարակական կազմակերպությունն իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ և այդ գործունեության շրջանակներում մասնակցում է պետական կարիքների համար կատարվող գնումներին ու գնման որևէ ընթացակարգի շրջանակներում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրերի իրականացման դիմաց կազմակերպության եկամտի ստացման աղբյուր է հանդիսանում պետական կամ համայնքային միջոցները, ապա նրա մոտ առաջանում է պարտադիր աուդիտ անցնելու պահանջ, քանի որ դրանք նույնպես համարվում են հանրային միջոցներ: Այդպիսի պահանջի առկայությունը վկայում է խտրական վերաբերմունքի դրսևորման մասին, քանի որ միևնույն փաստական հանգամանքներում գործող այլ առևտրային կազմակերպությունների հետ համեմատած, ՀԿ-ի պարագայում պարտադիր աուդիտի պահանջով ծանրաբեռնված ապրանքի/ծառայության գինը թանկանում է՝ աուդիտորական ծառայության արժեքի և ժամանակի չափով, իսկ այլ կազմակերպաիրավական ձև ունեցող սուբյեկտների համար այդպիսի պահանջ առկա չէ:

2.3. Անհրաժեշտություն կա նաև հստակեցնելու հանրային միջոցներ տերմինը՝ հասկանալու համար, արդյո՞ք այն ներառում է ստացված նյութական գույքը, ոչ նյութական ակտիվները (լիցենզիաներ, արտոնագրեր, իրավունքներ և այլն), աշխատանքները և ծառայությունները, կամ էլ, օրինակ, արդյո՞ք հանրային միջոց է որևէ պետական կամ համայնքային կազմակերպության կողմից տրամադրվող միջոցը, որի եկամուտների աղբյուր է հանդիսանում ոչ միայն պետական բյուջեն, այլ նաև սեփական տնտեսական գործունեությունը, կամ արդյո՞ք հանրային միջոց տնօրինող է այն իրավաբանական անձը, որի մասնակիցների մեջ է նաև պետությունը և այլն:

2.4. Անհրաժեշտ է լրացուցիչ քննարկել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ հանրային միջոցներ տնօրինող մարմնի կամ իրավաբանական անձի միջոցներից տրամադրվող հանրային դրամական միջոցները՝ Կազմակերպություններին մրցույթային կարգով տրամադրելու հարցը և օրենսդրական կարգավորման լուծման տարբերակներ առաջ քաշել՝ նպատակ հետապնդելով ապահովելու այդ գործընթացում թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

Առաջարկություն. Տարընթարցումներից խուսափելու, առկա խտրականությունը վերացնելու, թափանցիկությունը բարձրացնելու և հանրային միջոցների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկում ենք պարզաբանել հանրային միջոց տերմինը, վերացնել պարտադիր աուդիտի պահանջը՝ անհրաժեշտության դեպքում այն ներառելով պետությունից ստացված միջոցների տրամադրման պայմանագրերում, սահմանել կարգ՝ կազմակերպություններին տրամադրվող դրամաշնորհների վերաբերյալ:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Զարգացման Սկզբունքներ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: